


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին և Պարտք հմր. 8 Մճ.
• Գաւառաց • 10 Մճ.
վեցամս. • և Պարտք • 4 Մճ.
• Գաւառաց • 5 Մճ.
Օտար երկրներու • 50 Պար.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրոշ, երկու անգամի հա-
մար 2 դուր 5, աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կը-
լայ :
Իւրաքանչիւր թիւ և դրոշմը թուղթ .



ԼԵՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱՁՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Գուրս դնացած լրագրաց ճանրու-
ծ ախարք խմբագրութեան վրայ և :
Լրագրաց վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խմբագրի
— Տնօրէնին պիտի ուղղուի : Այսպէս
թիւ Սանտրքըրար Հաստէսի թիւ
198 : Նօրո խան : Մասիսի գրասեն-
եակը :
Հանրու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :
Չսպուած նամակ, յոգ աւած, եւ
եւ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 43 ՄԱՐՏ

Ա. Զ. Գ.

Թղթագրամին տարապայման անկ-
մանը պատճառաւ, որով լրագրոյս մէն
մի թերթին գինը 50 փարանց թղթ-
թագրամը 3 1/2 փարա հաշուելով
11 փարայի իջած է, մինչդեռ միւս
կողմանէ բոսթայի և դրոշմի ծախ-
քերը մաքուր դրամի վերածուելով
քառասպատիկ բարձրացան, ինչպէս
մեր միւս ամեն ծախքերը, պարտա-
ւորեցանք ձեռքէ ծախուած Մասի-
սի թերթերուն գինը կրկնապատկել,
այսինքն երկու 50 փարանց թղթա-
գրամէն չորս 50 փարանցի կամ որ
նոյն է՝ 11 փարայէն 22 փարայի հա-
նել առ այժմ :

Ասկէ զատ՝ տեղական թղթատա-
րութեան միջոցաւ լրկուած լրագ-
րաց բոսթայի տարեկան ծախքն ալ
քառասպատիկ բարձրանալուն՝ այսինքն
չորս մէծիտիէի մօտ հասնելուն պատ-
ճառաւ՝ անոնց տարեկան գնոյն վը-
րայ ալ երկու մէծիտիէ բոսթայի
ծախք աւելցնելու կը պարտաւորուի :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Քաղաքական լուրերը կարեւորու-
թենէ զուրկ են, և թէպէտ շատ
ինքնաբերական կան որք կրնան մեծ դէպ-
քեր ծագեցնել, սակայն այս վայր-
կենիս մէջ անստուգութիւն կը տիրէ :
Հեղինական պատուիրակները բրէ-
վէզայէն մեկնեցան, բայց ո՞ր պիտի
մնան Գունաստանի պահանջները,
տակաւին այս նկատմամբ կարելի չէ
դուշակութիւն մ'ընել : Եւրոպի-
քոնֆերանսը ըսած էր թէ Գունաստան
կրնայ սպասել, և եթէ այսպէս եր-
թայ, գուցէ շատ ժամանակ պիտի
սպասէ : Հաւանականաբար Գունաս-
տանի սահմանակից գաւառաց մէջ
ապստամբութիւն պիտի սկսի, և ա-
րիւնհեղութիւններ պիտի լինին,
մինչև որ միջնորդ տէրութիւնը կա-
րենան լուծում մը գտնել : Մեծ-Եւ-
րոպայի թան լրագրոյն մէկ թղթ-
թագրին հետ ըրած խօսակցութեան
մէջ ըսեր է թէ Գունաստանի հող
տալ բոլոր իսլամաց պատուոյն կը
դպչի, քանի չէ ինքնը պատերազմ-
ութիւն յաղթութիւն տարած չեն, և ե-
թէ պատերազմին, անտարակոյս Օս-
մանեան զօրքն յաղթող կ'ընեն : Ուս-
տի վեհ. Սուլթանն, իբրեւ իսլամաց
խալիֆա, չկրնար Հեղինաց հող տալ
իսկ Եւրոպա տակաւին միայն բարո-
յական աղբեցութեամբ դործել կու-
ղէ այս խնդիրը լուծելու համար :

բայց թերեւ Հեղինաց իրենց պա-
տուիրակաց վերադարձէն ետեւ բո-
լորովին իրենց հանգարտութիւնը կո-
րուսանեն, և ապստամբաց հրոսակ-
ներն իրենց սովորական ընթացքը
բռնեն : Հետեւեալ այս խնդիրն ա-
յաղային համար վտանգով լի կ'ե-
րեի :

Ռուսիոյ վերջին ծանուցագրե-
րուն վրայ տէրութեանց մէջ սկսած
բանակցութեանց նկատմամբ տակա-
ւին լուր չկայ : Ինչպէս յայտնի է, Կոր-
չաքով իշխանը տէրութեանց չըջա-
բերական մը դրկած էր՝ առ կախ
խնդրոց և մանաւանդ սահմանաց ո-
րոշման վրայ ուշադրութիւն հրաւի-
րելով, որուն պատասխանած էր լորտ
Սախալերի յունվ. 26 թուականաւ,
եւ աղբարարած էր թէ Անդրիա Պէր-
լինի դաշնագրութեան արամագրու-
թիւններէն չպիտի չեղի : Այսպէս
Պուլկարիոյ և Արեւելեան թումէի մի-
ացման և Պալքաններուն ալ Պուլկա-
րաց ձեռքը մնալու յոյսերը կը ցրէ-
ին, սակայն Կորչաքով իշխանը Լորտ
Սախալերի պատասխանած է և եր-
կու ահրութեանց մէջ այժմ գաղտնի
բանակցութիւն մ' սկսած է, որոյ
վախճանը գուցէ համաձայնութիւն լի-
նի : Ռուս լրագրերէն ոմանք զայս հա-
ւանական և ոմանք անկարելի կը հա-
մարէին. իսկ անգղիական թերթե-
րէն ոմանք այս համաձայնութեան զը-
րոյցը Ռուսիոյ փորձի համար թուու-
ցած մէկ օգտաւարիկ կը համարին :
Բայց ինչ որ ալ լինի, պետական մար-
դոց խորհուրդներուն մէջ ցուրտ դա-
տուութիւնը իրից տեղ անցած ժա-
մանակի մէջ եմք, և չլուսացուիր որ
Ռուսիա դործերը ծայրայեղութեան
մղէ : Թէ և Ռուսիա յաղթութիւնը տա-
րաւ և Բեդրսուրիկի մէջ բուրդ մը
կը կանգնէ, որոյ պատուանդանին վը-
րայ անցնալ պատերազմին դրուագ-
ները պիտի քանդակին, և ծայրը
Ռուսական արծիւը մահիկն իւր ճի-
րաններուն մէջ պիտի առնու, սա-
կայն ազգ մը ո՞րչափ և մեծ լինի,
չկրնար հետզհետէ զոհողութիւններ
ընելանդադար : Անցեալ պատերազ-
մը Ռուսիոյ մէջ զգացում մը ձգեց,
որ կառավարութեան բոլորովին նը-
պաստաւոր չէ, Պուլկարաց համար
սահմանագրութիւն հաստատելու օ-
րինակը Ռուսաց խիստ հրապուրիչ
յորդոր մ'է : Օտարաց համար արիւն
թափող և ազատութիւններ վստառ-
կող Ռուս ժողովուրդը կ'ըզայ թէ
ինքն ալ ազատութեան կարօտ է :
Այսինքն միութեան ամենաշեղծա-
սակցիցներէն Ռուսքի Միր թերթը 4
ամիս դադարման դատապարտեցաւ,
վտան զի իւր դրած՝ յոգուածներուն
մէջ կըսէր թէ քաղաքակրթութիւնը
ընդ Ռուսիա կարհամարհէն քաղա-
քական կեանքէն զուրկ լինելուն հա-

մար : Ռուսքի Միր կը պահանջէր որ
ժողովուրդը պետութեան դործոց
մասնակցի, և կը յարէր թէ զարմա-
նալի է որ երկուսից մէջ խնայութիւն
ներ 'ի դործ դնելու նպատակաւ անց-
եալները կազմուած յանձնախումբը
զինուորական և ծովային ծախուց և
կայսերական տան հաշիւները չէր կըր-
ցած նայիլ և այսպէս հարկաւոր մի-
լիոն թուալի կը վստմուէր յոգուած
սիրելեաց կայսեր :

Հեռագիրն անցեալ շաբթու լուր
բերաւ թէ Ռուսիոյ կայսեր և գահա-
ժառանգ Մեծ-Դուքսին միջև դժու-
թիւն ծագեր է, և այս պատճառաւ
Մեծ-Դուքսին արգելուէր է պալա-
տէն դուրս ելնել :

Վերջին թղթագրութիւնը եկած Եւրո-
պական լրագիրք առանց այս իրողու-
թիւնը ժխտելու՝ հետեւեալ տեղեկու-
թիւնը կը բերեն :

Աղէքսանդր կայսեր գահակալու-
թեան տարեգարծին օրը (մարտ 26ին)
երբոր պալատականք իրենց չնորհա-
ւորութիւնը կը մատուցանէին Ն. Վե-
հափառութեան, գահաժառանգ իշ-
խանն ալ այն առթիւ 'ի մէջ այլոց
հետեւեալ խօսքերն ըսաւ .

« Եւանդեամբ կը վախարիմք և
վստահութեամբ կը յուսամք թէ Զեր
Վեհափառութիւնն՝ իբր վեհապետ
պիտի շարունակէ 'ի դործ դնել այն
խմաստուն որոշումները զորս ցարդ-
ընդունած է : »

Կայսրը պատասխանեց՝ իւր բա-
ռերը չեղանելով . « Բոլոր ջանքս կը
նեմ որպէս զի իմ ժառանգս տէրու-
թիւնը բարօրութեան և զօրութեան
կատարը դնէ : Սակայն տակաւին
մեծ դործ մ'ունիմք մեր առջև : Պէտք
է անյապաղ ծախքերը նուազեցնեմք,
գրամոց չըջարելու թիւնը կանոնաւո-
րեմք, բանակը վերակազմեմք և իւր
վարչութիւնը բարեկարգեմք, որոյ թե-
րութիւնները նոր փորձով մ'ալ հաս-
տատուեցան, և երկրին առողջական
վիճակը բարւոքեմք : Ուրիշ գործեր
ալ կան որոց վրայ յետոյ պէտք է ու-
շադրութիւններ դարձնեմք, բայց
սպասելու եմք որ ներկայ կ'ընքերն
հանդարտին : Եթէ ես այդ ժամանա-
կը չկրնամ տեսնել, իմ ժառանգս
պէտք է ստանձնէ այս աշտոնը : »

Մեծ Դուքսը լուծեամբ ետ քաշ-
ուեցաւ :

Այս խօսքերէն կը հասկցուի որ
գահաժառանգ իշխանն իբրեւ զը-
լուխ աղտոտական կուսակցութեան
« իմաստուն որոշումներ » ըսելով ա-
ղտոտական բարենորոգմանց ակնար-
կել ուզած է . իսկ Կայսրը կերպիւ
մ'անոր անհամբերութիւնն յանդի-
մանած է, աւելի կարեւոր և անհրա-
ժեշտ բարեկարգութեանց պէտքը
ցուցնելով : Կերեւի որ այս դէպքն ա-
ռիթ տուած է կայսեր և գահաժա-

ռանդ որդւոյն միջև դժուութիւն
ծագած լինելու զրոյցին :

Նիւ-Եօքըն եկած հեռագրոյ մը
նայելով, Անգլոսառամաց դէմ Անգ-
ղիացոց պատերազմը կարծուածին
չափ շուտով վերջանալու երեւոյթ
չունի :

Եւրոպայի խան Լաի հրատարակուէր
է. իւր մետասանամեայ եղբայրը Ժո-
զովրեան և զօրոց ներկայացուէր է
իր կառավարիչ Մադարի-Շէրիֆի և
համակրութեամբ ընդունուէր :

Մարտ 13 թուականաւ Եւրոպայ
խանին մէկ պատգամագիրն եկեր է
Մադարի-Շէրիֆի՝ ծանուցանող թէ Եւ-
րոպայի ցեղերն երկու վաղա Անգլիական
զօրաց յաղթեր և դանտը հալածե-
րն խօսքի ձորին մէջ, ուր Անգլիա-
յիք արդէն Բրիտանական վարչու-
թիւն հաստատած էին :

Անգլիայի Լաիմայի բերդին մէջ
ալ յաղթուէր են, որ Եւրոպայի ցեղերէն
առնուած էր . ասկէջ զատ տեղւոյն
Անգլիայի կառավարիչն ալ կապուած
Գապուլ տարուէր է :

Անգլիոյ թագուհւոյն Եւրոպայի
մէջ ընելիք ուղեւորութեան ծրագիրն
այժմ վերջնականապէս որոշուած է .
վերթօրեա թագուհւոյն մարտ 25ին
արքունական շոգենաւը պիտի նստի
Շէրպուրկ և անտի ֆարիդ երթալու
համար, ուր գիշեր մը պիտի բնակի
Անգլիոյ գետապետունը : Հետեւեալ
օրը Մոն Մենիսի և Թուրինոյի ուղ-
ղակի ճանքով խալիք Արօնա քաղա-
քը պիտի երթայ, ուր Հոմի Անգ-
ղիական դեսպան Սըր Օկլիսթիւս
Բաճէթ և իւր կինը զինքը պիտի ըն-
դունին :

Նիւ-Եօքըն Հէրալդ լրագիրը սըր-
տանակի տեղեկութիւններ կը հրա-
տարակէ տարիէ մ'ի վեր Պրադիկոյ
մէկ մասին մէջ տիրող սարսափելի սո-
վուն վրայ երկարատեւ երաշտութեան
մը պատճառաւ Բարահիպա գետէն
մինչև Սան-Ֆրանչիսքո գետը տա-
րածուած երկիրն 800 քիլոմէթր լայ-
նութեամբ բոլորովին հունձքէ զրկը-
ւած է :

Ձեարա գաւառին մէջ, որ այդ-
երկրին կեդրոնն է, մէկ միլիոնի չափ
բնակիչք առանց տարուստի մնացին :
Կերեւի որ կեդրոնական կառավարու-
թիւնն 'ի սկզբան այս վիճակին ծան-
րութիւնը չէր հասկցած, մինչև ան-
գամ իրաց բուն վիճակը ցոյց տուող
լրագրաց համար ամբաստանութիւն
եղաւ իբր գիտմամբ չաբութիւն խօ-
սող կառավարութեան դէմ Բայց յե-
տոյ մէկ միլիոն տուարի վարկ մ'ան-
բաւական եղաւ դժբաղդ քաղցրեց
օղնութեան հասնելու : Այս սովուն
զոհ դնացող անձանց թիւն առ նուազ
150,000 կը հաշուի, բայց ժողովրդ-

եան մէջ տարածուած համարը 300 հազարի կը հասնէ : Վերջապէս զարհուրելի համաճարակ հիւանդութիւն մը , որ ժամտախորի կը նմանի , սովէն ազատ մնացողները կը ջարդէ :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Այս տարւոյ հասած հետաքննութիւն

Լոնտոն 28 մարտ .

Երէկ Լոնտոնի ժողովին մէջ հարցուեցաւ Լորտ Սալիսպըրի թէ երբոր Բուսիա չուղէ Պէրլինի դաշնադրութիւնը գործադրել , և Սալիսպըրի ալ իւր տէրութեան սպառնալովեան համար հարկաւոր դատի անդիմանալի նախադրման Մարմարայի ծովը վերադառնալի և մինչև իսկ Սև ծով մտնելի , Անգլիա այդ խնդիրը պիտի ընդունի :

Լորտ Սալիսպըրի պատասխանեց . « Սալիսպըրի կրնայ իւր դաշնակիցներէն օգնութիւն խնդրել , բայց կառավարութիւնն այդպիսի պատահականութիւն մը չնախատեսեր : »

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ .

Բրէվէզայի նախորդ կառավարիչ Թիմուր Կաշան Պէրաթի կառավարիչ անուանեցաւ .

Տրամայի նախկին կառավարիչ Սալահ Էսաթի պէյ Բրէվէզայի կառավարիչ անուանեցաւ :

Պաշտօնական ազդ. մը կը ծանուցանէ թէ Սէլանիքի նահանգէն լուծի կենդանիներ դուրս հանուին արդիւնաւոր է տեղական պիտոյից պատահաւ . մինչև ի նոր տնօրինութիւն պայմանագրութեանց համար տըրուած պայմանաւածամբ 20 օր է : Յիշեալ նահանգէն Կ. Պօլսի դուռ բերուիլը պիտի շարունակէ .

Ուրիշ պաշտօնական ազդ. մ'ալ կը ծանուցանէ թէ Լիւլէ Պուրկասի տօնախմբումն , որ ամեն տարի մարտ 14/26 ին կը բացուէր , այս տարի օգոստոս 13/27 ին պիտի բացուի :

Պատերազմական դործոց նախարարութիւնը Լիւլէ Թահիր Կաշան և սպայակոյտի ուրիշ քանի մը սպայներ զրկեց յԱրևելեան Բուսիայի Ռուսաց ետ քաշուելէն յետոյ Օսմանեան զօրաց գրաւելիք տեղերն որոշելու համար :

Յայտնի է թէ ըստ դաշնադրութեան Արևելեան Բուսիային մայիս 3ին պիտի պարպուի :

Օսմանեան կայսերական Պանքայի տնօրէն Պ. Պօթէր երէկ Մեծ-Եպարքոսին հետ տեսակցութիւն մ'ունեցաւ Օսմանեան պարտուց միացման և վիճաբանութեան խնդրոց վրայ :

Օտէսպէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Թօթէպէն զօրավաւրէն երէկ յիշեալ քաղաքն հասեր է , և քանի մ'օրէն Բեդրասլուրի պիտի ուղեւորի :

Օսմանիէ զրահաւորին հրաման եղաւ Միջերկրական ծովն երթալ : Օսմանեան նաւատորմիդէն ուրիշ քանի մը նաւեր ալ պատրաստութիւն կը տեսնեն Միջերկրական ծով երթալու :

Վազըթ լրագիրը կը ծանուցանէ թէ մինչև մէկ շաբաթ Բ. Դրան և Դարասաղի իշխանութեան միջև պաշտօնական յարաբերութիւնք պիտի վերահաստատուին : Գաբաճա պէյ 2էթինեյի օսմանեան դեսպան պիտի անուանի :

Վազըթ լրագիրն իւր այս առաւօտեան թուով հաւատարմեցաւ կը ծանուցանէ թէ Բ. Դրանը մեծ տէրութեանց ծանուցագիր մը զրկեց է՝ Արևելեան Բուսիայի մէջ Պուլլարաց կողմէն իսլամ բնակչաց վրայ ի դործ դրուած բռնութեանց դէմ գանդաւորելով :

Գերմանիոյ կառավարութիւնը Բ. Դրան պատասխան մը զրկեց է , յորում Բ. Դրան ծանուցագրոյն պատմած եղելութեանցն համար ցաւ յայտնելով , յայտարարեց է թէ Գերմանիա այս մասին միջամտութիւն չը կրնար ընել :

Սթամբուլ լրագիրը կը ծանուցանէ թէ Վեհ. Սուլթանին կողմանէ Հակահատունեանց արտօնութիւն չը նորհուր է պատրաստեալ տեղապահ մ'անուանելու : մինչև որ Քիւլէիւնի դերապաշտօնին յաջորդ մ'ընտրուի :

Կըսուի թէ հասարակութեան մեծ մասը կամուրջին բաժը պիլինձով հատուցանելու անհնարութեան մէջ գտնուելուն պատճառաւ , ծովային դործոց նախարարութիւնն որոշեց է յիշեալ բաժը նորէն 20 մարտ թիւթադրամով ստանալ մինչև ի նոր տընօրինութիւն :

Երևանի վարչութեան մէջ բաւական մեծ գողութիւններ երևան ելած են :

Երևանի ծրարներուն համար թղթէ ժապուէններ տուող պաշտօնեայք քանի մը հարկը հազար զրուշ գողցեր են :

Շաբաթ օրը հայի նուազութեան պատճառաւ շատ փութերու առջև մեծ բաղմունքի խռնուած էր , և քանի մը փութեր ալ աւար առնուեցան : Նոյն օրն անձ մը Թօթէպէնի մօտ Պօղազ քեօնէն թաղին մէջ փութ մը հաց առնելու դրաղած միջոցին , վրան գտնուած 40 հատ 100նոց թուղթը գողցուեցաւ :

Կ. Պօլսի Բաղաքապետութիւնը կիրակի օրն իւր պաշտօնէից մարտ ամսականին մէկ երրորդը վճարեց ոսկով լիւր 120 զրուշէն :

Տէփթէրիսանէի տնօրէնութիւնն ալ իւր պաշտօնէից հին ամսականները մէթալիքով վճարեց :

Օսմանեան անպաշտօն նախարար Նամիզ Կաշան Վեհ. Սուլթանէն արտօնութիւն խնդրեց Պրուսայի նահանգին մէջ իւր տգարտին երթալով անդ բնակելու :

Ն. Կ. Վեհափառութիւնն արտօնութիւն տուած լինելով , Նամիզ Կաշան իւր աղկիւն ամսականութեան յետոյ Պրուսա պիտի երթայ :

Հալէպէն կը ծանուցանեն թէ Սիւլէյման Կաշան , որ վեց տարի աքսորման դատապարտուած է , յիշեալ քաղաքն հասեր է և անտի ուղեւորութիւնը շարունակեց է ի Պաղատա :

Մայրաքաղաքին Աւստրիական դեսպան Զիլի կամը ծանուցագիր մը զրկեց Բ. Դրան , որով Օսմանեան կառավարութեան ու շաղկապութիւնը կը հրաւիրէ թաղլընայի հանրածանօթ Միւֆթիին շարժմանը վրայ : Այս անձն , որ Աւստրիացոյ Պօնիֆիկատմաժ ժամանակն անոնց դէմ դադարաւորապէս պիտի զլխաւորներէն մին էր , այժմ վերստին զօրք կը դրէ եղբր Նօվի Պաղարի դաւառին մէջ՝ Պօնիֆիկ և Հէրաքն Աւստրիացոյ դէմ յարուցանելու մտօք :

Գաբաճէյի երկաթեայ կամուրջին շինութիւնն ամառնոց Սիւրիւնայի և Օսմ. կառավարութեան միջև կնքուած պայմանագրութեան մը համեմատ , յիշեալ Անգլիային խնարայէն բաղում երկաթեայ նիւթեր զրկած է , որովք ի մօտայ կամուրջին վերանորոգման պիտի ձեռնարկուի :

Կ. Պօլսի նաւահանգստին վարչութիւնն իմանալով որ այս գիշեր գողերու մտկոյլ մ'երկու կամուրջներուն մէջ տեղին երկաթ նետած նաւերէն գողութիւն ընելու պիտի երթայ , հակադրութեան մակոյթներ զըրկեց , որք գողերուն մակոյթը բռնեցին և գողերը Բերայի ոստիկանութեան յանձնեցին :

Հինգշաբթիէն ուրբաթ լուսնալու գիշեր մայրաքաղաքին Պարսկց դեսպանատան մէջ մեծ գողութիւն մ'եղաւ հետեւեալ պարագաներով .

Չորս հազար արծաթ ռուբլի պարունակող փոքրիկ սնտուկ մը , զոր Պարսկց դեսպանը գեռ նոր ընդունած և իւր սենեկին մէջ դրած էր , անյայտ եղաւ առանց ուրիշ թանկագին բաներու դաշեալ , ինչպէս շալք , գոհարեղէնք և այլն , որք միեւնոյն սենեկին մէջ գրուած էին :

Ուրբաթ անուառ գողութիւնն իմացուեցաւ , առանց մեկնուելու թէ ինչպէս գողերը կրցած էին մըտնել գեսպանին սենեակը : Հասարակ գողք անշուշտ միայն մտուին առնելով դոհ չէին լինէրայլ անդ գըտնուած գոհարներն և ուրիշ թանկագին նիւթերն ալ կը գողնային :

Ոստիկանութեան նախարարը գողութիւնն իմանալով , անձամբ Պարսկց դեսպանատանը գնաց և Մօհսին խանին տուած արտօնութեան վրայ քննութիւն մը բացաւ :

Նախ հաստատեցաւ թէ դուրսէն ոչ ոք գեսպանատան պալատը կըրցած էր մտնել և թէ գողերը նոյն իսկ գեսպանատան մէջէն էին երեք Յոյն սպասաւորաց վրայ կանխած լինելով , ձերբակալեցան :

Տրապիզոնէն մարտ 8 թուով լուր կուտան մեզ թէ քաղաքէն 2-3 ժամ հեռի Լիւլէ անուն գիւղաքաղաքն հրդեհ պատահելով , շուկան ամբողջապէս այրեր , և խանութներուն մէկ մասն ալ կողորոտեցին : Տեղական կառավարութիւնն անհոգութեամբ կամ ապիկալութեամբ չէ կրցեր ոչ հրդեհէն ոչ ալ աւարտութեան առաջն առնուլ : Տեղւոյն բնակիչներէն 8 Հայ ընտանիք յետին չքաւորութեան մէջ լինելու են , որոց նպաստ հաստատուել կը խորհի եղբր Տրապիզոնի Հայոց Բաղաքական ժողովը :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ

ԷՈՒՆԱՐԸ ՈՒՄՈՒՄԻՔ
Երէկ իրիկուն գողուեցաւ 12.20 (Լատինաց Աւետման տօնին պատճառաւ , այսօր Պօրսան գող է :)
Բուսիկի երկաթուղի ֆր. 42 50
Թղթապարտ ֆր. 900
(Որոշ գին չուրի :)

ԸՆԹԱՅՔ ԳՐԱՄՈՑ

13 Մարտ
Անգլ. լիւր . 109 25
Նարթիսի սոկի . 87 17
Խոֆիսի լիւր . 89 21
Գըրբից . 51 10
Մէհմետի տարրերութիւն . 5 10
Մէհմետ . 143
Պիլի . 143

ԱՅԿԱՅԻՆ

Կը լսեմք թէ Ս. Պատրիարք Հայրը պիտեւր զհանդերձ իւր հրոմարականին վրայ՝ չէ ընդունի Գեր. Իլը :

միջկեանի հրաժարականն և հրաւեր դրեք է որ իւր փոխանորդական պաշտօնը վարելու համար :

... Տէր .

Ընդ բարձր հովանաւորութեամբ Գաղիոյ դեսպան Նորին վսեմ. Ս. Յուրիէի և ի նպաստ Արարատեան ընկերութեան անցեալ յունիս 18/30ին տրուած արարահանգէսին հաշուեցոյցն ընդ գրոյս զրկելով Ձեզ կը խնդրեմք որ լարեհամբ Զեր պատուական թերթին մէջ հրատարակել , և այս առթիւ մեր խորին շնորհակալիքը մատուցանելով ամեն նուիրատու Բարեբարաց , մնամք յարգանքօք :

Ի դիմաց Կարգադիր յանձնագրոյ 8/30 մարտ 1879 Նախագահ Սեփիէ

ՀԱՇՈՒՆԿԵԻՌ

Ի նպաստ Արարատեան ընկերութեան 1879 յունիս 18/30ին տրուած արարահանգէսին

ՊԱՐՏԻ

Վարձք , գորգարանք , երաժիշտք , և լուսաւորութիւն	Փր. 1946.95
Տարաբանութիւն և ծանուցումք	461.40
Չանապան ծախք	390.
Ապարիկ	1800
Պատրաստ դրամ	15511.65
	20110 Փր.

ՊԱՆԱՅԻՐ

Տոմարաց հասցիք գին 20 Փր.	18140
Օթեակ Պէլ Էթմա՝ » 40 »	1040
Պէնեւար » 40 »	260
Օթեակ Բ. Եթմա՝ » 20 »	480
Նուէր	280

20110 Փր.

8/20 մարտ 1879 Ի դիմաց Արար. Կ. Պօլսի Պարահանգէսի յանձնագրոյ
Կեր Նախագահ Նախագահ
Յ. Նուրեմ Սեփիէ
Ատենադպիր Գանձաւոր
Աւագար Սեփիէ Գ. Գալեմ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԴՐՈՑ

Զմիւռնիա 8/20 մարտ 1879

Ազնիւ Մասիս .

Քաղաքի երեսփոխանական ժողովին անդամները երկու շաբաթ առաջ հրաժարեցան և Աստուած գիտէ թէ երբ պիտի կազմուի նորը : Իր առեւտրութիւնները պիտի հրատարակուին՝ պարունակելով առաջինէն մինչև վերջին նիստը , բայց մեր ժողովուրդին մէջն ալ չուրի մը կայ ևրիսեւ վարժարանաց աշակերտներու թաղակալութեան յայտարարութեան հրատարակութեան ի վեր :

Նորընտրի Աստուածական խորհուրդն աշակերտաց ծնողաց կարողութեան և առնոց աւանդուած ուսմանց ստիճանին համեմատ տուրք մ'որոշած է , որ իրենց հաշիւին նայելով 76600 զրկ պիտի ընէ և Ազդ. վարչութեան տուած 120 հազար զրկին վրայ բարդելով՝ ազդային երկուսեւ վարժարաններու յառաջադիմութեան համար պիտի մատակարարեն :

Ժողովուրդին չուրի Աստուածական խորհուրդին այս որոշման դէմ է . կը պահանջեն որ 120 հազար զրկով բաւական ըլլան , որուն լաւ մատակարարութիւնը կրնայ իրական արդիւններ արտադրել , այս թէութեամբ որ մեր վարժարաններու ընկերացը վերէն ի վեր քակելով ի հիմանց բարեկարգութեան . առ այս դատ մը մարդիկ հանրագիր մը կը չընկնեն և զեր ամեն ուրեք քաղաքին մէջ և կըսեն թէ 180 ի չափ ստորագրութեան հաւաքեր են զլիսաւորապէս Խանաֆներէ , սակայն ցարդ տղի հանրագիրը պարտօնական տեղ մը ներկայացուած չէ :

Արշաքի մարդիկ՝ այնչափ կարծք կըսէ ժողովրդական տուածը , և ամեն գլուխ :

մէկ ձայն կելլէ՝ ի նորատու և ի սարսառ
սոյն հանրագրին . բայց ո՞ր ձայնը իրա-
ւունք ունի՝ առանց մանրամասնութեան
մանկեղձ՝ դժուարին է որոշել :

Ոմանք կատարելէ թէ հիմայ անցած
է այն ժամանակը, ուր աշակերտ մը պար-
գապէս գրել կարգալ, օտար լեզու մը
ու քիչ մը առուստրի վերաբերող գիտե-
լեքներ ուսանելով՝ իր դպրոցական շրջա-
նը աւարտած կ'ըլլար : Բայց հիմա այն-
պէս չէ, լուսաւորուած ժամանակի մը
մէջ կապրինք, և մեր յարաբերութիւն-
ներն Եւրոպացիներու հետ ըլլալով՝ հարկ
է քանի մը Արեւմտեան լեզուներ նոյնպէս
և բաւական գիտութիւններ ունիլ, որ
մարդկային ընկերութեան մէջ լաւ դիմել
մ'ունենանք . բայց ասոնք ունենալու հա-
մար ստակ պէտք է, և Աղգ. Վարչութեան
տուած 120 հազար դրուշը՝ ընթացիկ
դրամ՝ խիստ քիչ կ'ըլլայ . այս թերու-
թիւնը մասամբ իւր լեզունելու համար
հարկ է որ ամեն ծնողք նիւթապէս օգ-
նեն :

Իսկ ոմանք ալ կատարելէ թէ տնտե-
սապէս ու աշակերտ մատակարարութեամբ
և արթուն ու հմուտ դաստիարակներով
Աղգային վարչութեան վճարած գումա-
րով մեր վարժարանները մեր փափա-
քածէն աւելի արդիւնք կրնան տալ, ե-
թէ Զմիւռնիոյ ժողովրդեան կացութեան
յարմար դպրոցական ծրագրով մը ընթա-
նան . իսկ ընդհանրական ժողովրդէն ըս-
տակ հանգանակելով ու խել մը դիտու-
թիւններ դպրոցին մէջ աւանդելով՝ դրս
դէժ մասամբ ուսնելու կամ լաւ ևս որ
և է դիտութեան մասնագէտ ըլլալու հա-
մար աղգային վարժարաններու մէջ եր-
կար ատեն յաճախող աշակերտներ պի-
տի պակսին, — վասն զի ընդհանրապէս
էսմաֆի դաւաններ են և 18-19 տարեկը
կոնսէլէն ետքը կը հարկադրուին ասորելու
համար դպրոցը ձգելու, նոյն ատեն ա-
շակերտաց ժամանակը ապարդիւն ըստա-
նելէ ի գատ ուրիշ բանի չծառայել, և
թէ հարկ է մէկ երկու լիզու, քիչ ու-
սում, բայց հիմնաւոր և հաց հայթայ-
թող, աւանդել աշակերտաց որ իրօք
արդիւնք պիտի տեսնուի :

Ինչպէս կերել, Աղեի Մասիս, այս
երկու կուսակցութեանց առարկութիւն-
ներէն ըստ իս առաջինը միայն իրաւունք
ունի բնիւր թէ ծնողք՝ պարտաւոր են
նիւթապէս օգնել . բայց ուսմանց ծրագ-
րէրը աշխարհ շատ ընդարձակել — ինչ-
պէս է Պ. Իսիքեանին — բանաւոր չէ,
մասնաւորապէս Զմիւռնիոյ Աղգային Մե-
րոպեան վարժարանին համար, քանի որ
ենթադրենք թէ հարկ եղած գումարը
հայթայթելով՝ ուսանողներ պիտի պակսին
բնականօրէն, վասն զի այսօր յայտնի է
որ մեր վարժարանները յաճախող աշա-
կերտաց մէջ հարկերէն հազիւ թէ 6 հա-
րուստի դաւակ կայ, որ քիչ մը տարեկը
առնելու պէս՝ օտար դպրոց մը, գիշե-
րօթիկ վարժարան մը կամ յնարաւ կը
դրկուի . իսկ էսմաֆի դաւաններ հարկադ-
րուած են, ինչպէս քիչ մը վերը ըսինք,
կանուխ դպրոցը թողուլ և իրենց օրապա-
հիւրը հայթայթելու երթալ . նոյն ժամա-
նակ աշխարհ ծախքեր և մանաւանդ այն-
չափ ժամանակ սարապ վատնուած կըլլայ
Այս առարկութիւնը լայնօրէն իրողութիւն
մ'է, որուն հասկառակ պնդողը չեմ կար-
ծեր որ մէկը գտնուի :

Միթէ նոյն թղտկարաշխութիւնն էր
որ ժողովրդեան յուսման շարժառիթն
եղաւ, — ո՞չ — վասն զի իր պահանջում-
ները թուեցի և ցաւ է ըսել որ Պ. Իսիքե-
անին թողութիւնը գիտական ծրագրին ու
իր միամեայ պաշտօնավարութեան ըն-
թացքը նոյնին տեղի տուած են :

Երբ նախկին Ուսումնական խորհուր-
դը նկատելով որ իր յորինած ծրագրերը
որ Պ. Իսիքեանինէն պակաս չէր մնար,
անգործադրելի պիտի ըլլայ շատ մը նը-
կատումներով, միանգամայն նախկին տե-
սուշը իր բաղմոթիւ գրադումներով ան-
ձեռնհաս վիճակի մը հասած է՝ փափա-
քելի վիճակի մը մէջ դնել վարժարաննե-
րը որոշեց Պ. Իսիքեանը պաշտօնի կո-
չել և վարժարաններուն դէկը անոր ձեռ-
քը յանձնել : Քաղաքական ժողովը վեր-
ջապէս Ուսումնական խորհուրդի որոշումը
գործադրեց : 1877 մարտ 29ին Պ. Իսիքե-
անին Զմիւռնիոյ երկուս վարժարաններ

րուն տնտեսութեան պաշտօնն ստանձնեց :
Ճշմարիտ է որ նա իր պաշտօնը իրեն
յատուկ ուսումը ըրած է և որուն համար
ո՞չ նուազ ճամբորդութիւններ ըրած ու
իր պաշտօնին վրայ կատարեալ տեղեկու-
թիւններ ու վործեր աւած է, սակայն
Զմիւռնիոյ ժողովրդեան ընկերական կա-
ցութեան յարմար չղծեց իր ուսման ծը-
րագրերը : Նախ դպրոցին մէջ գտնուած
դաս մը ապարդիւն վարժարանները չէ-
աւանդելէ ի գատ անոնցմէ աւելի անար-
ժաններու պաշտօնն տուաւ, թերեւ ա-
նոնց խորհուրդով կարող ըլլայ Գերմա-
նական մեթոդը մտցնել մեր վարժա-
րաններուն մէջ :

Մանչեսթըրի հեռագր. լուսն

Վան 15 փետր. 1878

Խմբագրապետ Տէր.

Լրագիրներն հրատարակեցին թէ Եւ-
դոկիա քաղաքէն երեսօրեան ընտրուած
Մինաս Զեբազ էֆենտին հրաժարական
տուած է, կանոնական տարեկը չունե-
նալով : Ես թէ և Վ. Պօլեքցի, բայց որով-
հետեւ վերջին ժամանակներս Եւդոկիոյ
հետ այնպիսի կապերով կապուած եմ, որ
զրեթէ Եւդոկիացի եղած եմ, շատ ցաւ
զգացի Մ. Զեբազ էֆենտին հրաժարման
համար այն երեսօրեանական պաշտօնէ-
ղոր մեր Գաւառական Ընդհանուր ժողով
զրեթէ միաձայն քուէով յանձնած էր
նմա : Այդ ցաւ առիթ տուաւ ինձ հե-
տեւալ նկատումներն անել զորս, խըմ-
բագրապետ Տէր, կը խնդրեմ որ շնորհ
անէք անկողնակալ կերպով հրատարակել
Ձեր պատուական օրակերթի մէջ :

Ես չեմ ուզեր առարկել այսօրեղ թէ
արդեօք 50 տարեկան չեղող երեսօր-
եաններ չե՞ն դատուի մեր Աղգային Ժո-
ղովի մէջ, և թէ երեսօրեան ընտրուողի
ծննդական վաւերագիրներն կը ընտու-
արեօք : Զեբազ էֆենտին պատճառա-
բանեալ հրաժարականէն կրնացուի որ
իւր չէ թէ կը փախչի աղգին ծառայելէ,
այլ չէ ուղեր երեսօրեանական աթոռի
վրայ բարձրանալ իւր ոտքի տակ դնելով
այն Սահմանադրութիւն՝ որով այդ աթոռ
կունենայ Աղգային ժողովին մէջ : Նա
արդէն իւր հրատարակած ՄՁ Գրէշ Ե-
Ս-րի մէջ (*) յայտարարած է թէ ինչ
առաջարկ պիտի անէ Աղգային ժողովին
երբ մի օր աթոռ ունենայ այնտեղ : Բայց
ինչ անհրաւ օրէն է այդ որ անշարժաւ
կը համարի մի գաւառի ներկայացուցիչ
լինել այն անձ, որ դեռ անցած տարի
Եւրոպական աշխարհին և մեծ տէրու-
թիւններուն առջև ամբողջ Հայ ազգի կը
ներկայացնէր զրեթէ, և իւր այդ փափուկ
և ամենադժար պաշտօնի մէջ այնքան
արժանաւոր կերպով վարուեցաւ որ պա-
տիւ բերաւ թէ՛ իւր անձի և թէ՛ իւր
ներկայացուցած ազգի : Միթէ չկա՞ն
այնպիսի անձեր որ 50 էն աւելի տարեկը
և Աղգային ժողովին մէջ ալ աթոռ ու-
նին, բայց ոչինչ օգուտ չեն բերել Աղ-
գին : Կարծես թէ մոռցուած են այն ա-
մեն յատկութիւններ զորս Սահմանադ-
րութիւնն կը պահանջէ ընտրելիներէն և
որը ամենահարկաւոր են և միայն 50 տա-
րեկան հասակ կը ստուգուի : Հասարա-
կային առածն շատ իրաւացի է ասած թէ
« խեղճ տարեկին մէջ չէ, գլուխն մէջ է » :
Կընդունի՞ր որ տարիներ անցնելով
մարդ աւելի փորձառու կը լինի . բայց ե-
րեսօրեանական արժանաւորութիւնն 50
տարեկան հասակին մէջ ամբողջին ան-
յարմար է մեր ազգի արդի վիճակին,
քանի որ մեր հին սերունդի մեծամաս-
նութիւնն, մանաւանդ Հայաստանի մէջ,
դեռ չէ ընթանալ թէ ինչ է Սահմանա-
դրութիւնն, ինչ իրաւունքներ կը տայ
և ինչ պարտաւորութիւններ կը դնէ :
Պէտք է որունն ընտրելիներու և ընտ-
րողներու աչք նեղ չըլնակ ընդլայնել և
նոր սերունդի ներկայացուցիչներուն առ-
ջև բանալ Աղգային ժողովի դուռներն :
Քանի որ Սահմանադրութիւնն կը վերա-
քընտուի այժմ, պատեհ առիթ կը համա-
րուի ամեն երեսօրեանին ուղարկութիւնն
հրախել ալ կէտի վրայ և խնդրել որ
զիւրութիւն տան արժանաւոր երկուս-

(*) Տես Արեւելեան Մասիսը 1878 նո-
յեմբերի ամսաթիւերէն :

սարկներուն աթոռ ունենալ Աղգային
ժողովին մէջ : Կը կարծեմ թէ անցարմար
չի լինիր մեր ազգի արդի վիճակին, թէ
երեսօրեանական ընտրելին 27 տարե-
կանէն և ընտրողն 22 տարեկանէն վար
չլինի :

Հաճեցէք, Խմբագրապետ Տէր, ըն-
դունիլ յարգանքներս :

Մ. Փօլեքցի

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ

Խաղաղ Միւսն քաղաքին մէջ
եղեքարական լոյսը փորձներու և հը-
րապարակներու լուսաւորութեան
գործածուիլ սկսած է : Փետրվար
25ին, Տօմի հրապարակը 24 եղեք-
արական վառարաններու միջոցաւ
լուսաւորեցաւ : Երբոր այս 24 վառա-
րանք միահաղոյն վառուելով հըրա-
րակը լուսով ողողեցին, ժողովուած
բուռն բաղմոթիւնն եւսանդաբին
հուրաններով ողջունց այս սքանչե-
լի լուսաւորութիւնը :

Ծայրագոյն Արեւելից և Ովկիանիոյ
ծանօթութեան նուիրեալ Եւրոպական
լրագիր մը հետաքրքրաշարժ խորու-
թիւն մը կը ծանուցանէ իւր վերջին
թիւերէն միոյն մէջ, այն է Եւրոպա-
ցոյ մը Հնդկաց Պոլտոսպական կրօն-
քննութիւնը : Կերեւի որ յիշեալ
Եւրոպային Աւստրալիոյ նշանաւոր
գիտնական մ'է՝ անունը ծածուկ պահ-
ւած, որ Հնդկաստանի յրմայեանաց
միայն ծանօթ եղող նուիրական լեզ-
ւին աւելի հմտնաւոր համար այս
միջոցին դիմել է : Սիամի թագաւորն
յատուկ շնորհ մ'ընելու համար՝ հրա-
մայր է որ իւր պալատան մեծի շքեղ
մեհակներն մէջ կատարէ նորագարծն
իւր նորընծայութիւնն, որոյ ընդու-
նելութեան առթիւ փառաւոր արա-
րողութիւններ կատարուել են : Չորս
տարի պիտի անցունէ հոն նարընձայն՝
աշխարհէ բոլորովին առանձնացեալ :

Բաղում փորձերով հասկցուած է,
կրտէ Եւրոպական լրագիր մը, թէ
քսան և հինգ տարեկան ամուրի
մ'այնքան հաւանականութիւն ունի
մեռնելու՝ որչափ ունի 45 տարեկան
ամուսնացեալ մարդ մը : 25-30 տարե-
կան այրի մարդ մ'ալ 56-60 տարեկան
մարդու մը չափ հաւանականութիւն
ունի մեռնելու : Այս վիճակագրու-
թիւնն կը հետեւի թէ ամուսնութիւն-
նը մարդը քսան տարի կը ծերացնէ,
իսկ այրիութիւնն ևս առաւել : Խիստ
ցաւալի վիճակ մ'է այս անոնց հա-
մար՝ որք իրենց ուղածին պէս կին
չեն կրնար դառնել ամուսնաւոր :

ԸՋԴ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԹՐԱՄԱՌԱՅԻ

Կը ծանուցուի հասարակութեան
թէ ներկայ մարտ ամսոյ 16/28էն ըս-
կըսեալ վարչական խորհրդոյ որոշ-
մամբ՝ երթեւեկութեան դիմերը պը-
ղինձ գրամով պիտի վճարին, և թէ
ներկայ ուղեգրին հետեւեալ կերպիւ
պիտի փոփոխի :

Ա. դաս Բ. դաս	
Ղալաթայէն Պէշ. Օրթ.	փր. 80 60
» Բապաթալ »	» 60 40
Բապաթալէն Պէշ. Օրթ.	» 60 40
Էմին-Էմինէն Ս. Գալաթ »	» 80 40
» Սուլթան Մահմուտ »	» 60 40
Հանկայէն Եմին զուլէ »	» 60
» Աղա Համամ »	» 40
Զօրականք մինչև Զալուշ »	» 20

Թղթադրամն հրապարակին վրայ
ունեցած դնով պիտի ընդունուի :

Ընդհ. տնօրէն
Ռ. Վիլհելմ

Ա. Զ. Դ.

Պաշտօնական վաճառատան մէջ ըս-
տիպողական պատրաստութիւններ կը
տեսնուին մարտ 15-ի վիճակահանու-
թեան ճիշդ ժամուն տրամադիր դրո-
նուելու : Գաւառները պատուէր եղած
է թէ քիչ օր մնացած ըլլալուն՝ հե-
ռագրի միջոցաւ անոնք կրնան Պօլիս
իրենց ծանօթներու ձեռքը վիճակա-
տուն գնել : Մարտ 15 ժամ ճիշդ 6
ու կէս, սոյն վայրկեանէ վերջը տոմ-
սակի վաճառումը պիտի դադարի :

Ի. Ա. Ն.

Նիդամիլէ Նանը աղիւզ խաղախն-
տէ պուշտան տաղիւղ տէկիլմէնը-
րի հատրաթընտան սաթըրաւաղը վէ-
դարարը դաթիսի վերելքէն իւսն
գըլընտն եմաի երկը էլլի պին գըլէ-
քէրէկին շուրութը մապիւմէսիլլէ
իմրա խիլէն միւղայիտէսիլլտէ պէ-
հէր գըլէսի օն իւր փարայա թալի-
սի էօհտէսիլլտէ դալմը վէ դարարը
դաթիսի տալի վերելքի օլմաղլէ պու-
կիւն ալիւտան դատար ուսուլու վէճէ
իլէ երկը պէշ զամիլլտա թալիւլ օ-
լանլարըն Տարի Շուրայի աւքէրիլլէ
կէլմէլլէրի :

12 մարթ 1879

Պապը Սէրասքէրի

Նիդամիլէ սարաճհանէ անպարը
իլէ մէվիլմալ քովիսիթընա պիւր սէ-
նէյի քեռալիլլէ խիլմալլէնա քատար
հէր նէ մըքտար լուլու մի օլու պէ-
թալէպ օլուտուր խէ թէպիլմ. քըլլն-
մալ վէ քէպիլ կէօմիլլէ իլլէ թէպիլ-
մինէ քատար քեռալիլլէ մէտրիլլի
միւթէսիլլտէ բաճի օլմալ վէ մալ-
պուլ սէնէպիլլէն թալիլլտէն
իթիպարէն էսմանընը նըպիլ օն պէշ
վէ նըպիլ տիկիլլէ օլմալ պիւր կիւն
միւրալլտէ պիլ մէճիլլէ իլլէլմիլլ զըշ
հիւսալլ իլլէ նիդամիլլէ խաղիլլէսիլլ-
տէն վերելքի վէ պէհէր ատէտի
տէօրթ երկը տիւրհէմ կէլմէք վէ է-
կէր վէլլէ նօքսան կէլուր խէ քէլէ
իլլէ իւմալ քըլլնմալ վէ մէհնուր
նուսիլլէսիլլէ միլթալլը օլմալ իւզ-
րէ միւղայիտ օլուսնալ Գարաֆի-
սար քէլէսիլլէն պէհէր ատէտի իկիւր
մի իւր զըշա թալիլլէ էօհտէսիլլտէ
օլուլ մարթ բուլմին օն պէշիլլմի
իլլէսիլլէսիլլէ կիւնիլ թէքար միւնա-
քատար պիլ իմրա քատարը դաթիլլէ
վերելքէն իլլտէն, իլթա իլթալլէ թա-
լիլլ օլանլարըն եմալի մէքիւրաթ
Տարը Շուրայի աւքէրիլլէ կէլմէլլէրի :

10 մարթ 1879

Պապը Սէրասքէրի

Թապուրար նիդամիլլէ դալուլ
նիդամիլլէ նանը աղիւզ խաղախն-
թէպիլմ. գըլընտն դուսնիւր պալի-
յէսիլլտէն էլլէ զայրը սալիլլ օլարալ
մէվիլմալ օլուլ սաթըրաւաղ օլան էլ-
լի պին գըլէ մա շուլալ քէքիլմէթ
գըլըլլ թալիլլի քատարընտա էսմա-
նը երկըլլէ. դալիլմէ երկը զըլուշա
օլարալ քէլիլլէն վերելքէն դալուլ-
րըլմալ վէ պու քէքիլմէթ խալիլլթ
չըդարըլմալ օլան մաստա պաշա-
պիլ չէյ ետըլմալ մալ շարթ վէ չէ-
րայիլլի սայիլլէսիլլէ իլլան օլուսնալ
խէ տէ, մէքիլլէ քէքիլմէթ գըլը-
լընըն էսմանը սիմ մէճիլլէն երկըլլմի
զըլուշա նագուէն վէ քէլիլլէն թէպիլ-
յէսիլլէ մուսիլլէսիլլէ դարար վերել-
քէն, թէքար պիլ միւղայիտ պէ-
հէր գըլէսի օն իւր փարայա թալի-
սի էօհտէսիլլտէ դալմը վէ մարթը
բուլմին օն իւլիլլէսիլլ սալը կիւնիլ
միւղալիլլէսիլլ իմրալլա դարարը
դաթիլլի վերելքէն քիլլուլթ խոլի-
լէճէկիլլտէն, իլթիլլալլալլ թալիլլ օ-
լանլարըն եմալի մէքիլլէսիլլ Տարը
Շուրայի աւքէրիլլէ կէլմէլլէրի :

10 մարթ 1879

Պապը Սէրասքէրի



ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱՂԱՋԱՆ

Կ. Պոլիս Ղալաթիա Միմոսեան և
ընկերաց Սմերիկայի Մաղադան կը
ժախուրի, ողելու ճերմակ կտաւներ,
ու սեղանի ծածկոց և այլն, սեղանի
արձանած պատուաքաղ, դրդալ
և այլն. կապի լամպաներ, սեղանի
ճերմակ յախճապակի ուղաք Անդ-
րոյ տեսակէն, քարեօղաններ, փիքէ
ծածկոց, քիւնէն սալան և այլն, լու-
հանոցի վերաբերեալ անօթներ, կա-
րի գարծիքներ, և ուրիշ անթիւ պի-
տանի վաճառք կը ծախուին չափա-
ւոր գներով:

ԿՈՆՏԱՆՏԻՆՈՒՄ ՏԱՄԱՏԵԱՆ ՉՈՒԱՐԱՆ

Օրան Կաթն Բէ- 465

Հայ, Տաճիկ և Եւրոպացի տաղա-
րական տաւեր իրենց ամեն տեսակ
ներով կը գանուին պատրաստ խիտ
արժան գներով:

ՆՈՐ ԼՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Ա. Ա. ՍՈՒՐԵՆԵԱՆ

ՆՈՐ ՂԱՍԵԴԻՐԻՔ ԱԶԳ. ՊԱՏՄՈՒԹԱՆ

Մանր ողջոյց համար

Սուղ միջոցի մէջ այս երրորդ ան-
գամն է որ իւրոյ կընծայի սոյն գիր-
քը, որուն իբր նախնական դասա-
գիրք ունեցած կարեւորութիւնը ար-
դէն հաղարատ օրինակաց սպառ-
մամբն հաստատուած է: Այս անգամ
հեղինակը՝ երրորդ տպագրութեան
մէջ՝ սոյն վերջ տպագրութեան դասա-
գիրքը խիտ կարեւոր գիտելիքներով
ճոխացուցած և ընդարձակած է,
սկսեալ Հայկազունի ժամանակէն մին-
չև Պէյլինի վերջածոյովը և տարւոյս
սկիզբները պատահած մեծամեծ անց-
քերը:

Բնորդ և հաստատուն թղթի վրայ
Հայաստանեայց տպարանին իւրոյ ըն-
ծալութեամբ, կը ծախուին Երես-ճամի
Չիլինիլիքի ճատտէսի, թիւ 2, Ս.
Ղուկասեան զրատուր և ուրիշ գը-
րակաճառաց քով: Գին 3 1/2 զրշ
արժան խաւ:

Վարժարանաց համար օրինաւոր
զեղծ կըլլայ:

ՃԱՇԱԿ

ՀԱՅ ՄԱՏԵՆՈՂՐՈՒԹԱՆ

ԱՇԽԱՏԱՆԻ ԼԵՋՈՒՌ

Աշխատանքութեամբ Ա. Պոլիսեանի
Ազգային հեղինակաց զանազան
գործերէն քաղեալ ընտիր հաւաքա-
նոյ մ' է Արձակ և Ուսանաւոր, որով
բանասէրը կրնան կատարեալ ճաշակ
մ'առնուլ արդէն Հայ մատենագրու-
թեան վրայ:

Գործը տպագրութեան յանձնուած
ըլլալով, ծախքը փոքր չի չառն թե-
թեցնելու համար բաժանորդագրու-
թիւն մը բացուած է բոլոր գրաւա-
ճառաց քով:

Բաժանորդագրութեան գինն է
2 ֆրանք. իսկ տպագրութեան յետոյ
3 ֆրանքի պիտի ծախուի:

ԴԻՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՈՑ

ՅՈՐԴՆԵՅ Գ. ՄԱՐԵԲԱՆ

Ի պէս ազգային վարժարանաց

Իզիր տպագրութիւն Գ. Մարեան

Ամեն հայ գրաւաճառաց քով կը
գտնուի: Գին 90 սանթիմ:

ԻՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ

Կ. Ս. ԻՄԲԱԳԻՐ

Ի ՅԱՐԱՐԵՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ

ՀԱՆՔԱՆ ԿՈՐՈ ԽԱՆ



ՇԻՐԻՔԻ ԻՍԱՅՐԻԷԻ ՇՈՒՆԱԿԱՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵՆԻԻ ԺԱՄԵՐԸ

1879 ՄԱՐՏ 1 ՀԻՆԴՍԱԹԻՐ ՕՐԷՆ ՄԿՍԵԱԼ

ՄԻՆՁՆԻ ՄԱՐՏ 15

ԲՈՍՖՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈՒՆԱԿԱՆԵՐԸ

Ժ-ժ	Երբեք-է-է-է	Թ-է
2 45	Երեւանէն Մէլիքի Պէյլին, Թարապիւս, 32	
1 45	Երեւանէն Մէլիքի Պէյլին, Թարապիւս, 49	
2 45	Երեւանէն Մէլիքի Պէյլին, Թարապիւս, 48	
4	Մէլիքի Պէյլին, Թարապիւս, 32	
5	Երեւանէն Մէլիքի Պէյլին, Թարապիւս, 28	
6 30	Երեւանէն Պէյլին, Թարապիւս, 4	
8	Երեւանէն Պէյլին, Թարապիւս, 49	
9 45	Մէլիքի Պէյլին, Թարապիւս, 22	

ԱՐԵՎԻԿԱ ԳԵՂԷՆ

1	Արեւիկա Գեղէն, Օրթաք, Պէյլին, 28
1 30	Արեւիկա Գեղէն, Օրթաք, Պէյլին, 23
2	Պէյլին, Արեւիկա, Օրթաք, Պէյլին, 22
2 45	Արեւիկա, Օրթաք, Պէյլին, 21
3 30	Արեւիկա, Օրթաք, Պէյլին, 23
4	Արեւիկա, Օրթաք, Պէյլին, 48
10 15	Արեւիկա Գեղէն, Օրթաք, Պէյլին, 21
11	» » » » 28

ԱՐԵՎԻԿԱ ԳԵՂԷՆ

12 45	Պէյլին, Թարապիւս, 21
12 45	Պէյլին, Թարապիւս, 4
1	Թարապիւս, Պէյլին, 47

ԼՐԱԳՐՈՑ ԵՐ ԿՐԻՍՏՈՍ ԵՐԹԵՒԵՆԻՐ

Լրագիրս ամեն օր կը հրատարակուի
րաց ի կիրակի և առ օրերէ:
Բաժանորդագրութեան տեղն է Ղա-
լաթիա Սանտրոքի շտապէս թիւ
198, Նորո խան Մասիսի խմբագրատե-
նը: Իսկ գաւառաց մէջ հետեւեալ հոգա-
րարձակաց դրասներով:

ՉՄԻՆԻՍԻԱ. Ստեփան Ե. Տեմեան.
ՆԻԿՈՒՄԻՆԻԱ. Խոսրով » Խոսրովեան.
ՊՐՈՒՍՏԱ. Ստեփան Ե. Տեմեան.
ՌՈՍՏՈՒՄ. Արթ. Տ. Սերստակեան ա-
ւաղ քաջանայ Ֆիլեան.
ԱՂԲԱՆԻՍ. Ստեփան Ե. Տեմեան.
ՍԵՐԱՍԻՆ. Ս. Լիմեմեան Ե. Տեմեան.
ՍԵՐԱՍԻՆ. Ս. Լիմեմեան Ե. Տեմեան.
ՍԵՐԱՍԻՆ. Ս. Լիմեմեան Ե. Տեմեան.
ՍԵՐԱՍԻՆ. Ս. Լիմեմեան Ե. Տեմեան.

ԵՐԵՎԱՆ. Թաղէս Ե. Տեմեան.
ԿԱՐԻՆ. Կարապետ » Զաքարեան.
ՄՈՒՇ. Միլիտէ » Փօթիկեան.
ՎԱՆ. Բերիս. Սեդրակ » Խոսրովեան.
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. Թովմաս Ե. Տեմեան.
ՆԱԿԱՆ. Երեւան.

ԵՐԵՎԱՆ. ՄԱՐՏ.
ՅՕՔԵՆ. Յերհատ աղա Ս. Յերհատ.
ԵՐԵՎԱՆ. Ս. Տեմեան.
ՍԵՐԱՍԻՆ. Ս. Լիմեմեան Ե. Տեմեան.
ՍԵՐԱՍԻՆ. Ս. Լիմեմեան Ե. Տեմեան.

3	Պէյլին, Օրթաք, Թարապիւս, Գանդ. Ա. Հիսար, 33
8 45	Պէյլին, Օրթաք, Թարապիւս, Գանդ. Ա. Հիսար, 23

ԿԱՄԱՐԱՅԻՆ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԹԵՒԵՆԻՐ

	Ժ-ժ	Երբեք-է-է-է	Թ-է
2	Գանդ. Ա. Հիսար, Գանդ. Ա. Հիսար, 4		
2 30	Պէյլին, Օրթաք, Արեւիկա, Թարապիւս, 32		
5	Գանդ. Պէյլին, Օրթաք, Արեւիկա, Թարապիւս, 49		
6 30	Թարապիւս, Պէյլին, Օրթաք, Արեւիկա, 28		
8	Պէյլին, Օրթաք, Արեւիկա, Թարապիւս, 22		
10	Արեւիկա, Պէյլին, Թարապիւս, 32		
10 40	Պէյլին, Օրթաք, Արեւիկա, Թարապիւս, 48		
11 15	Պէյլին, Թարապիւս, Պէյլին, Թարապիւս, 19		

ԱՐԵՎԻԿԱ ԳԵՂԷՆ

2 45	Պէյլին, Արեւիկա, 21
2 45	» » 23
3 30	» » 48
9 30	Գանդ. Պէյլին, Օրթաք, Գանդ. Արեւիկա, 21
10 45	Գանդ. Պէյլին, Օրթաք, Գանդ. Արեւիկա, 28
11 15	Գանդ. Պէյլին, Օրթաք, Գանդ. Արեւիկա, 23
11 45	Պէյլին, Օրթաք, Գանդ. Արեւիկա, 28
12	Պէյլին, Օրթաք, Գանդ. Արեւիկա, 4

ԱՐԵՎԻԿԱ ԳԵՂԷՆ

3 45	Թարապիւս, Պէյլին, Օրթաք, Գանդ. Ա. Հիսար, 28
9 45	Գանդ. Պէյլին, Օրթաք, Գանդ. Ա. Հիսար, 17
10 30	Գանդ. Պէյլին, Օրթաք, Գանդ. Ա. Հիսար, 33
11 40	Գանդ. Պէյլին, Օրթաք, Գանդ. Ա. Հիսար, 21
11 40	Գանդ. Պէյլին, Օրթաք, Գանդ. Ա. Հիսար, 22



“ՎԱՄԱՐԱՅԻՆ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԹԵՒԵՆԻՐ”


ՄԵՍԵՍՈՒՄ ԵՐ ԵՐԵՎԱՆԻ

Մաղադան Մաղադան

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Երբեք չէր կարելի շորագործ Երեւան
Մաղադան Մաղադանի հոգովն,
ընծայելով անոր նոր կեանք, աճում,
և փայլուն գեղեցկութիւն: Ի՞նչ ար-
դիւնք ստացաւ կատարեալ և շատով
վաճելով արեւելեան ինքն ինքն:

Միշտ կը հաստատեն ինքն ինքն
մաղին բնական զօրացուցիչը:



Գլխաւոր Միջնորդը (Մաղադան) է—

114 AND 116 SOUTHAMPTON ROW, Լոնտոն, Ենգլիսի:

Կը ծախուին ամեն կեղծամաճառներն և չափա-
ճառներն, և Ենգլիսի Գլխաւոր մաղադաններն:

Կ. Պոլիս Ս. Քանդիլ. Եղբարաց քով, Ֆարմասի Պրիմանիք
Բերա Մեծ փողոց:

Օ Ճ Ա Ռ



Միշտ հաճախ օգտու, մորթը կը կակուղցնէ ու լեղի ջուրով ալ կը
փրկուի, տեսակը խիտ աղիւն ու գինը շատ ավան է. կը
ծախուի Կ. Պոլիս Ղալաթիա Միմոսեան և ընկերաց Սմերիկա-
յի մաղադան: